«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց **2023**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպե՞ս Հայոց պատմություն առարկայի դասավանդումը դպրոցում դարձնել ավելի արդյունավետ

Հետազոտող ուսուցիչ՝ Մերի Պապիկյան
(Բագրավանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ)

Բայանդուր **2023**թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

«Հայոց պատմություն» առարկայի դասավանդման նպատակը և խնդիրները.

Մեթոդներ. 5

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ուսուցման մեթոդների կիրառումը.....9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի ընտրության համար հիմնական խնդիրն է հետևյալը, թե ինչե՞ս Հայոց պատմություն առարկայի դասավանդումը դպրոցում դարձնել ավելի արդյունավետ, ճիշտ ներկայացնելով ու ընդգծելով այն վիթխարի դերը, որ ունի Հայոց պատմություն առարկան հայ աշակերտի արժեհամակարգի ձևավորման, հայրանանանաչողության ու հայրենասիրության գործում: Հայոց պատմություն առարկայի դասավանդումը դպրոցում սկսելով նախ և առաջ ու մշտապես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ճիշտ բառերի ընտրությանը խոսքը կառուցելիս, և իհարկե էթիկայի կանոնների պահպանմանը, քանզի խոսքը դառնում է գործողություն, իսկ ժամանակի ընթացքում բոլոր գործողությունները դառնում են սովորություն[1]: Դասարանի կառավարման որակի բարձրացման գրավականներից մեկը ես միշտ համարել եմ, սովորողներին հետաքրքրված, ներառված, աշխույժ ու մոտիվացված պահելը: Հայրենագիտական առարկան արդյունավետ դասավանդելու համար նաև անհրաժեշտ է վերացնել աշխատակազմում փոխհամագործակցության իրականացման համար խոչընդոտ հանդիսացող բոլոր գործոններն ու երևույթները: Դասավանդումը կայացած ու արդյունավետ համարելու համար պետք է մշտապես ուշադրություն դարձնել ազգային արժեհամակարգի պահպանման և պատմական ֆենոմենական մտածողության զարգացման վրա: Ժամանակակից կրթական մեթոդները լայն հնարավորություններ են ընձեռում հայոց պատմության ուսուցչին հայտնաբերել ու կիրառել տարբեր գործիքներ, մոտեցումներ առաջացած մարտահրավերները արժանավայել լուծելու համար, ու դրանց դիմակայելու համար: Մշտափոփոխվող ու զարգացող աշխարհում, հանախակի քաղաքական լարված իրավիճակներում հայոց պատմության յուրաքանչյուր ուսուցիչ դասավանդման ընթացքում բախվում է բազմաթիվ խնդիրների ինչպես՝ դասարանի կառավարումը, արդյունավետ հրահանգավորումը, երկարատև հիշվող նորամուծությունների ընդգրկումը դասապրոցեսում, բոլոր աշակերտների ներգրավվածությունը դասին և այլն: Առաջնահերթ խնդիր եմ համարում նաև օգնել աշակերտին ՝ զարգացնելու իր կարողություններն ու հմտությունները, իմաստավորելու և յուրացնելու ազգային արժեհամակարգի տարրերը: Ինձ համար պատմության դասի նպատակներից է ապահովել, որ աշակերտները կարողանան տիրապետել պատմական գիտելիքին, նպաստել բարոյական որակների զարգացմանը և զարգացնել արդիականության հետ կապված պատմական փորձը վերլուծելու հմտություններ: Իմ կարծիքով պատմության դպրոցական դասընթացը, հանրակրթական դպրոցում, պետք է ուղղված լինի մարդկության պատմական ուղղու, սոցիալական փորձի, գիտելիքների հիմունքների յուրացմանը, աշակերտների կողմից, պատմական դարաշրջանի մասին կոնկրետ պատկերացումների ձևավորմանը, պատմական աղբյուրների հետ լավ աշխատելուն, իսկ ուսուցանվող նոր նյութը պետք է անընդհատ կապակցել նախկինում ուսումնասիրված նյութերի հետ[2]: Պատմական իրադարձությունները լուսաբանելիս հանախակի

[1] http://publishing.ysu.am/files/Hayots_lezu_khosqi_mshakuyt.pdf

[2] Ս. Խաչատրյան. Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, համահեղինակներ՝ Տ. Սարգսյան, Ա. Սարգսյան, Ա. Հայդարցյան, Ա. Մամյան, Լ. Միրզոյան, Ա. Սարգսյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Մարտիրոսյան, Ս. Հովսեփյան, Գ. Ղարագյոզյան, «Ուսուցման արդյունավետ հնարներ», Եր. 2020, էջ 29

օգտագործում եմ փոխաբերական և էմոցիոնալ միջոցների ողջ զինանոցը: Օրինակ վերլուծական աստիճանակարգումը հնարավորություն է տալիս բոլոր աշակերտներին ուշադրության կենտրոնում պահելու, հասկանալով, թե ինչ չափով են աշակերտները կարողանում գիտելիքը կապակցել, և դրա հիման վրա ստեղծել նոր գիտելիք[3]: Գիտենք, որ անհերքելի է գիտելիքների, մտավոր կարողությունների դերը աշխատանքային գործունեության արդյունավետության բարձրացման գործում, սակայն հաճախ սովորողները դժվարանում են կողմնորոշվել գործնականում, երբ անհրաժեշտ է գիտելիքները կոնկրետ կիրառել, ոչ ստանդարտ իրավիճակներում: Խոսքը վերաբերում է գիտելիքի շարժունակության, մտքի ճկունության, ակտիվության, ինքնուրույնության բացակայությանը, գիտելիքները գործնականում կիրառելու անկարողությանը: Ժամանակակից տարբեր մեթոդների և ռազմավարությունների կիրառումը բացառիկ դեր կարող է ունենալ սովորողների տարածական պատկերացումների և երևակայության զարգացման, ու գիտելիքը կիրառելու գործում: Հետազոտական աշխատանքի նպատակներց է նաև է ուսումնասիրել ամենատարածված մեթոդների և ռազմավարությունների օգտագործումը պատմության ուսուցման ընթացքում:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածական մասից, երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Հայոց պատմություն առարկայի դասավանդման նպատակը և խնդիրները. Մեթոդներ

Բնականաբար Հայոց պատմությունը սոսկ դպրոցում դասավանդվող առարկա չէ, այն հայ ժողովրդի պատմական կերպարն է, հիշողությունը, հազարամյակների խորքից մեզ հասած անցյալն ու կենսափորձը, դարավոր մխիթն ու հիշողությունը: Դպրոցում Հայոց պատմություն առարկան բարձր արդյունավետությամբ դասավանդելու արդյունքում, աշակերտը հնարավորություն է ստանում սերտորեն հաղորդակցվելու սեփական ազգի կենսագրությանը, իր գիտելիքը ծառայեցնելով հայրենիքի հզորացմանն ու բարգավաճմանը: Մեր ժողովրդի անցած ուղին, կենսագրությունը, դարերի ընթացքում կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը առանձնահատուկ, մեծ նշանակություն ունեն հայ ժողովրդի համար: Սեփական պատմությունը իմանալը հնարավորություն է տալիս իրականացնելու ազգային վեհ նպատակները, պահպանելու և ապահովելու հայ ազգի շարունակությունը աշխարհում: Հայ ժողովրդի դարավոր պատմության առանձնահատուկ հատկանիշներից է համարվում պայքարը սեփական երկրում արժանավայել ու ազատ ապրելու համար: Ուստի ազատագրական շարժումների ռազմավարության արվեստը հատուկ ուսումնասիրության առարկա է[4]: Իսկ պատմության մեջ ռազմարվեստի առաջին հիմնաքարերը դրվել Արևելքում[5]: Այդ պատճառով է, նաև,

[3] Taylor, K& Rohrer, D., "The Effects of Interleaved Practice", Applied Cognitive Psychology 24: 837–848 (2010). http://uweb.cas.usf.edu/~drohrer/pdfs/Taylor&Rohrer2010ACP.pdf

[4] Ս.Վ. Սարգսյան «Հայ ռազմարվեստի պատմություն», Եր. 1969, էջ 218

[5] Е.А. Разин, История военного искуства, Москва 1955, стр. 523

որ առարկայի դասավանդման մեջ մեծ տեղ են զբաղեցնում զինված պայքարի հերոսական էջերը, ազգային–ազատագրական շարժումների նախորդ և նորագույն փուլերը:

Պատահական չէ, որ հատկապես պատերազմական օրերին մեր սովորողների մոտ մեծանում է Հայոց պատմության տարբեր հարցերի շուրջ հետաքրքրությունն ու հետևողականությունը, և արդիական են դառնում հայրենանվեր հերոսների մասին պատումները: Դրանք օգնում են մատաղ սերնդի բարոյահոգեբանական վիճակի բարելավմանը, ավելին՝ պարտվածի բարդույթը փոխարինվում է մարտնչած հերոսի կերպարով, որը մինչև արյան վերջին կաթիլն իր հաղթական պայքարն է մղել թշնամու դեմ: Այժմ էլ Հայաստանը դիմագրավում է մի շարք ծանր փորձություններ, ու ավելի քան երբևէ անհրաժեշտ է վերարժեվորել պատմությունը, այն սովորեցնելու մեդոդները: Ուստի, անհրաժեշտ եմ համարում մշակել պատմության դասավանդման այպիսի մարտավարություն, որտեղ թիրախային է կարողունակահեն ու գիտելիքահեն տնտեսության ձևավորումը, որը հնարավորություն կտա մեր ունեցած գիտական ներուժը պահել ու ծառայեցնել ի շահ հայրենիքի, քանզի զենքի ուժով ձեռք բերված հաղթանակները պահվում են միայն ճկուն դիվանագիտության, հզոր պետության և դիմակայուն տնտեսության ձևավորմամբ:

Արդյունավետ մեթոդների և հնարների կիրառման միջոցով պետք է ավելանա արդյունավետ ու ակտիվ դասավանդման միջոցները, սովորողին հնարավորություն ընձեռելով գործնականում կիրառելու դասապրոցեսի արդյունքում ձեռք բերած գիտելիքները[6]:

Իմ՝ որպես պատմաբանի և ուսուցչի վեց տարվա մանկավարժական փորձն ու նպատակադրումները, ինչպես նաև հետևողականորեն աշխատելուս ձգտումը հնարավորություն են տալիս գոյություն ունեցող ու նոր ուսուցման մեթոդները կերպափոխել, իմ աշակերտների համար դպրոցում ավելի մատչելի ու հետաքրքիր հայոց պատմություն առարկայի ուսուցումը կազմակերպելու համար:

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը հիմնականում դասի ընթացքում օգտագործվող մեթոդից, որից էլ հիմնականում կախված է նյութի յուրացման աստիճանը[7]: Հայոց պատմություն առարկայի արդյունավետությունն ապահովելու համար, անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել ինքնակրթությանը տրամադրվող միջոցներին[8]:

Իհարկե առանց բացառելու համատեղ աշխատելու արդյունավետության մասին[9]:

Ինտերակտիվ մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, դպրոցում առարկայի ուսուցումը մասնակցային, արմատավորված, սեփական դատողությունների վրա հիմնված դարձնելու համար[10]: Կարևոր է, որ

---

[6] Ա. Արևառդյան, Ա. Գուլբուդաղյան, Ս. Խաչատրյան, Ս.Խրիմյան, Մ. Պետրոսյան, «Մասնագիտական զարգացման ձեռնարկ»,Կրթության ինստ. Հրատ. 2004 թ, էջ 42-45

[7] Ի. Ֆ. Խառլամով, «Մանկավարժություն». – Մ. Գարդարիկի, Մինսկ 1999 թ., էջ 421

[8] Լ. Գ. Լապտևա, Վ. Ա. Սլաստենին, Ա .Ի. Պոդոլսկայա, «Հոգեբանություն և մանկավարժություն», Հոգեթերապիայի ինստիտուտի հրատարակչություն, 2004, 546 էջ:

[9] Ջ.Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան 2015, էջ 271:

[10] https://kznaknaxadprocakan.blogspot.com/

ուսումնառության ընթացքում բոլոր ուսուցիչներն օգնեն աշակերտներին, սակայն այդ օգնությունը չպետք է դառնա միանձնյա ղեկավարում կամ սոսկ վերահսկում[11]: Հետևաբար դասավանդման ընթացքում օգտագործվող մեթոդներն ու հնարները պետք է ծառայեն որպես գործիքներ, որոնց ըստ անհրաժեշտության կիրառման վերաբերյալ վերջնական որոշումը կայացնում է ուսուցիչը[12]:

Դասի պլան

Դասարան- 7-րդ

Առարկա- Հայոց պատմություն

Թեմա- Իրավունք և գրականություն

Նպատակը և խնդիրները

Հնգամանորեն ներկայացնել հայկական իրավագիտական մտքի ակնառու գործիչներին, նրանց գործունեությունն ու աշխատանքները:

Լուսաբանել հայ իրավական կյանքում դատաստանագրքերի ստեղծման նշանակությունը:

Մեկնաբանել ու վերլուծել Մխիթար Գոշի <<Գիրք Դատաստանի>> աշխատությունը:

Հարցադրումներ

1. Ինչպե՞ս Մխիթար Գոշը իր Դատաստանագրքով հիմք դրեց հայկական դատական համակարգին կամ դատարաններ կազմելուն:
2. Ի՞նչ օրենսդրական խնդիրներ կային տվյալ ժամանակահատվածում՝12-13-րդ դարեր:
3. Ո՞րն էր օրենքների ու գրքի ստեղծման անհրաժեշտությունը- նա առաջ էր քաշում 12 պատճառներ:
4. Գրական մտքի, առակագրության զարգացման գործում, ո՞րն էր նրա դերը:

Մեթոդներ և հնարներ

Սահիկաշարի պատրաստում, ցուցադրում, մտագրոհ, խմբային աշխատանք, ԽԻԿ համակարգ, էքսկուրսիա դեպի Գոշավանք

Միջառարկայական կապեր

Գրականություն, հասարակագիտություն, Համաշխարհային պատմություն:

Դասի ընթացքը

[11] Ս. Վարդումյան և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ, Երևան, Այբբենս, 2005, էջ 174

[12] Ս. Խաչատրյան. Ֆրիդրիխ էբերտ հիմնադրամ, համահեղինակներ՝ Տ. Սարդարյան, Ա. Սարգսյան, Ա. Հայդարցյան, Ա. Մամյան, Լ. Միրզոյան, Ա. Սարգսյան, Ա. Հովհաննիսյան, Ա Մարտիրոսյան, Ս Հովսեփյան, Գ. Ղարագյոզյան, «Ուսուցման արդյունավետ հնարներ», Եր. 2020, էջ 21-22

Խթանում- Նյութի ներկայացում կարճ դասախոսության ձևով, հետո դասարանը բաժանել երկու խմբի, որոնք ավելի մանրակրիտ փոխհամագործակցորեն են ուսումնավիրում նյութը; Խմբի անդամները քննարկում, գրառումներ են անում ու ընտրում են ենթավերնագրեր:

Իմաստի ընկալում-Այս փուլում կազմվում են նոր խմբեր, որի ներսում յուրաքանչյուր աշակերտ ներկայացնում է իր նոր խմբակիցներին, նախորդ խմբում կատարած աշխատանքն ու սովորածը: Այնուհետև աշակերտները վերադառնում են իրենց նախկին խմբերը:

Հարց ու պատասխան, համախմբային հարցում, անդրադարձ նախորդ թեմաներին, կապի ապահովում նոր հաղորդված դասանյութի հետ, փոքր ենթախմբային աշխատանք դասարանում-10ր

Նոր նյութի յուրացում-15ր

Հետադարձ կապ, տարաբնույթ հարցերի միջոցով ամփոփում-10ր

Գնահատում- իրականացվում է դասի ողջ ընթացքում

Տնային աշխատանք, հանձնարարություններ- 10ր

Կշռադատում- Տրվում են հարցեր խմբերին առանձին-առանձին, արվում են եզրահանգումներ. Նախապատրաստվում ենք կայանալիք էքսկուրսիային փոքրիկ ակնարկ և լուսանկարներ. գիտենք, որ Զաքարյան իշխանների հովանավորությամբ Տավուշում, Գետիկի մոտ Տանձուտա ձորում է գտնվում Նոր Գետիկի վանքը՝ Գոշավանք, ուր Մխիթար Գոշը բացել է իր դպրոցը: Երբ մենք այցելեցինք Գոշավանք, աշակերտները մեծ հետաքրքրությամբ ուսումասիրում էին տեղանքը,նաև իրենց համար բացահայտումներ էին անում, նրանք տեսան Մխիթաև Գոշի շիրմաքարը: Իհարկե ամբողջ ընթացքում հնչեցին աշակերտների սովորած հատվածները Դատաստանագրքից, ինչպես նաև Գոշի առարկներից: Անչափ ուրախ ու տպավորված էին բոլորը,

Դասը լիովին յուրացվել էր աշակերտներիս կողմից:

Հայոց պատմության նմանատիպ արդյունավետ դաս կազմակերպվեց նաև 8-րդ դասարանում:

Դասի պլան

Ուսուցիչ- Մերի Պապիկյան

Դասարան- 8-րդ

Առարկա- Հայոց պատմություն

Թեմա- Մամուլ և տպագրություն

Նպատակ և խնդիրներ

Վերջնարդյունքում աշակերտը պետք է իմանա 17-18-րդ դարերի հայ նշանավոր տպագրիչներին: Պետք է կարողանա նշել հայ առաջին պարբերականի դերը, թե ե՞րբ ու որտե՞ղ է տպագրվել, ովքե՞ր են հատկապես մեծ դերակատարում ունեցել այդ գործում:

Սովորողը կկարողանա առանձնացնել ակնառու աշխատությունները, հեղինակներին, կենտրոնները, տարեթվերը: Ներկայացնել հայ տպագրչների, պատմամշակութային գործիչների գործունեությունը:

Հարցադրում

Գնահատելի է արդյո՞ք հայ մամուլի ու տպագրության սկզբնավորումը որպես շրջադարձային, դարակազմիկ իրողություն:

Մեթոդներ և հնարներ

Սահիկաշարի պատրաստում, ցուցադրում, պլակատի պատրաստում, մտագրոհ, պրիզմա, խմբային քարտերով աշխատանք, քառաբաժան, քարտեզով ու պատմական, արխիվային լուսանկարներով աշխատանք, ԽԻԿ համակարգ, էքսկուրսիա դեպի Գրատպության թանգարան

Միջառարկայական կապեր

Գրականություն, Հայոց լեզու, Հասարակագիտություն, Համաշխարհային պատմություն, Աշխարհագրություն, Հայոց եկեղեցու պատմություն:

Դասի ընթացքը

Անհրաժեշտության դեմքում աշակերտներին տեղափոխել, ու բոլորին տեսանելի, գրատախտակի վրա գրել առանցքային՝ մամուլ ու գրատպություն բառերը, ու պրիզմայի օգնությամբ բացահայտել աշակերտի թեմային տիրապետելու աստիճանը: Անհրաժեշտության դեպքում հարցերով ամփոփում ենք:

Իսկ այստեղ Գագիկ արքայի արձանը աշակերտներից յուրաքանչյուրը յուրովի մեկնաբանեց, նրա հագուստի ու կերպարի ամեն դետալ մանրամասնորեն:

Հաջորդ գլխում որպես վարկած՝ լուծումներ խնդրի վերաբերյալ, առաջ եմ քաշել ավանդական և ժամակակից առավել հայտնի մեթոդները, որոնք կիրառել եմ և կշարունակեմ կիրառել պատմության ուսուցման գործընթացում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ուսուցման մեթոդների կիրառումը

Ես դասավանդման ընթացքում հաճախ օգտագործում եմ զրույցի մեթոդը: Զրույցները լինում են ներածական, գիտելիքների հաղորդման, ամրապնդող և ընդհանրացնող, գնահատող ստուգող և շտկող: Ներածական զրույց վարում եմ դասի սկզբում, մինչև նյութը ուսումնասիրելը, աշակերտներին հասկանալի դարձնելու առաջիկա աշխատանքի իմաստը, որպեսզի նրանք կարողանան պատկերացնել, թե ինչը ինչպես պետք է կատարել: Զրույցի դեպքում հմտորեն մշակված հարցերի միջոցով աշակերտների մեջ ակտիվացնում եմ նրանց արդեն ձեռք բերած գիտելիքները ու կարողությունները, նպաստելով աշակերտների նոր գիտելիքների ձևավորմանը: Հետո, դասի ընթացքում ցուց եմ տալիս տեսաֆիլմեր՝ նախապես մշակված առանձին հատվածներով՝ թույլ տալով աշակերտներին ակտիվ քննարկել և մասնակցել ամբողջ դասապրոցեսին: Դա նպաստում է երեխայի հետաքրքրության աճին, երեխայի անմիջական մասնակցությունը, օգնում է հնարարքինս արագ և արդյունավետ յուրացնել նյութը, նպաստում է ստեղծագործելու, ինքնուրույն մտածելու կարողություն ձեռք բերելուն: Հաշվի առնելով երեխայի ընդհանուր զարգացվածության ստիճանը՝ աշակերտին հանձնարարում եմ կազմել գծապատկեր, թեմային համապատասխանող նկար նկարել: Նաև հանձնարարում եմ փնտրել և գտնել համապատասխան նյութեր, դասը ներկայացնելով հեղինակային, մուլտֆիլմի կամ ֆիլմի օրինակներով՝ հստակորեն ուղղորդելով աշակերտին, միաժամանակ տալով նրան ընտրության լայն հնարավորություն: Այս ամենը խթանում է աշակերտի երևակայությունը, նրա համար հնարավորինս հետաքրքիր և դուրեկան է դառնում դասի ընթացքը: Դասը հետաքրքրություն է առաջացնում նաև դասընկերների շրջանում, ձևավորում է առողջ մրցակցություն: Դասի ընթացքում պահվում է նաև խորհրդավորությունը, որովհետև երեխաները սիրում են գաղտնիքներ բացահայտել: Գաղտնիքների առկայությունը մոտիվացնում է նրանց: Երեխաները ուզում են վարկյան առաջ բացահայտել, գուշակել գաղտնիքը: Անսպասելի, զարմանալի մտքերը գրավում են նրանց ուշադրությունը, հետևաբար՝ դասը անսպասելի նորությունով սկսելը շատ կարևոր եմ համարում: Այս համատեքստում կարելի է օգտագործել հակափաստական մտածողությունը: Նոր գիտելիքների հաղորդման զրույցը կիրառվում է նոր նյութի ուսուցման ընթացքում: Մեթոդ հասկացության բառիմաստային պարզաբանումները, մասամբ են բացահայտում նրա մանկավարժական բնույթն ու գործառույթային ուղղվածությունները[13]: Գիտելիքների ամրապնդման այս մեթոդը շարունակում է գիտելիքների հաղորդման փուլին և ուղղված է գիտելիքների խթանմանը, իսկ գնահատող և շտկող զրույցը նպաստում է գիտելիքների

[13] Սարուխանյան Ս., Դալլաքյան Ա., Դիշաղաջյան Ն., Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Վանաձոր 2008թ, էջ 6-7

զարգացմանը, ճշտել, լրացնել նոր փաստերով: Զրույցը պահանջում է լուրջ նախապատրաստական աշխատանք, հիմնական և հարկավոր հարցեր, որոնք կարող են ծագել զրույցի ընթացքում: Ամենակարևորն է, որ հարցերը ճշգրիտ ձևակերպում ունենան, ունենան տրամաբանական կապ, բացահայտեն ուսումնասիրվող նյութի էությունը : Խորհուրդ չի տրվում կիրառել պարզ, կամ երկիմաստ, «հուշող»՝ պատրաստի պատասխաններ : Զրույցի ժամանակ կարևոր է հարց և պատասխանի կատարումը: Աշակերտներին կամ խմբերին ուղղված յուրաքանչյուր հարցից հետո ուսուցիչը մտածելու համար տալիս ոչ մեծ ժամանակ, որից հետո լսում է աշակերտների պատասխանները: Եթե աշակերտները չեն կարողանում պատասխանել հարցին ուսուցիչը կարող է վերաձևակերպել, ավելի պարզեցնել հարցերը, դրանք մասնատել կամ նոր օգնող հարցեր ուղղել աշակերտներին:

Ուսուցիչը պետք է հետևողական լինի , որ բոլորը ակտիվորեն մասնակցություն ունենա զրույցին, ուշադիր լինեն հարցերին, պատասխանելուց առաջ մտածեն, փորձեն արտահայտել սեփական մտքերը: Ուսուցիչը հնարավորություն է տալու աշակերտներին շտկել իրենց պատասխանները, խնդրեն ընկերների օգնությունը: Չեն խրախուսվում թեմայից շեղող, թեմայի հետ կապ չունեցող և ակտիվության պատրանք ստեղծող հարցերը: Բավականին արդյունավետ է նաև դասի ընթացքում որոշակի սկզբնաղբյուրի օգտագործումը: Դա կարող է լինել ֆոտոգիզմ, թևավոր խոսք կամ նույնիսկ ինտրիգ՝ այդ ձևով տալով նախագիտելիք, ստեղծելով պրոբլեմային իրավիճակ, աշխատանքային տրամադրություն: Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի օգնությամբ ուսուցիչը դասարանից ստանում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ շատ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը: Դանդաղ մտածող, քիչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթերի վրա գրել իրենց կարծիքները և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի կարող փոխարինել բանավոր մտագրոհին: Պարզապես լրացնում է այն[14]:

Ուսումնական բանավեճն աշակերտների մասնակցությամբ հարցի ճիշտ լուծման ուղիների որոնումն է մտքերի, կարծիքների նպատակային և որոշակիորեն կարգավորված փոխանակման, քննարկման միջոցով: Բանավեճը ոչ այնքան աշակերտների՝ միմյանց տված հարցերի ու դրանց պատասխաններն է, ինչքան առկա հիմնահարցի քննարկում, լուծումների որոնում և դրանց համար գործադրված ջանքերի կազմակերպում[15]: Բանավեճը զրույցի մեթոդից

[14] Ս. Խաչատրյան. Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, համահեղինակներ՝ Տ. Սարդարյան, Ա. Սարգսյան, Ա. Հայդարցյան, Ա. Մամյան, Լ. Միրզոյան, Ա. Սարգսյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Մարտիրոսյան, Ս. Հովսեփյան, Գ. Ղարագյոզյան, «Ուսուցման արդյունավետ հնարներ», Եր. 2020, էջ 27

[15] https://lib.armedu.am/files/resource/files/2023-04-13/a7fee4a3ddb57e1afe6a8f8453042993.pdf

տարբերվում է, սովորաբար սահմանափակվում է մեկ առանձին թեմայով կամ հիմնահարցով ու կառուցվում է որոշակիորեն սահմանված ձևով: Բանավեճի համար կարևոր է դասարանում մթնոլորտի ձևավորումը և աշակերտների դասավորությունը: Նրանք պետք է դասավորվեն շրջանաձև, որ յուրաքանչյուր մասնակից տեսնի մյուսներին:

Պատմության դասավանդման լավագույն մեթոդներից է սկզբնաղբյուրով աշխատանքի մեթոդը: Սկզբնաղբյուրով աշխատանքի մեթոդը, կարևոր միջոց է ուսուցումն ավելի արդյունավետ ու հետաքրքիր դարձնելու համար: Սկզբնաղբյուրում մշտապես առկա են տարաձայնություններ: Այս հանգամանքը սկիզբն է դառնում ուսուցման գործընթացը խթանող միջոցին: Սկզբնաղբյուրով աշխատանքը հնարավորություն է տալիս աշակերտներին ոչ միայն տեղյակ լինել հակասություններին ու տարաձայնություններին, այլ նաև մասնակցել դրանց քննարկմանը և ավելի ամբողջական պատկերացում ունենալ այդ հարցի վերաբերյալ:

Կարելի է նաև դերերի ընտրությունը թողել աշակերտներին: Անհրաժեշտ է նշել, որ ներկայացվող իրավիճակի հիմք է դրվում որևէ խնդիր, և դերային խաղի մասնակիցները պետք է կարողանան ստեղծի կոնկրետ մարդկանց առօրյա կյանքին բնորոշ վարքային մոդել: Դասարանի այն աշակերտները, որոնք չեն մասնակցում խաղին, դիտորդի դեր են կատարում: Նրանք հետևում են խաղին, նշումներ կատարում խաղացող աշակերտների, վարքի և դրա հետևանքների վերաբերյալ: Այս դարի այսպիսի մեթոդներով աշխատելը ստեղծում է հնարավորություն և ընձեռում կրթական միջավայրի ստեղծմանը և սովորողների կողմից լեզվական գիտելիքների ինքնուրույն յուրացմանը[16]: Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսման գործընթացի այն ժամանակ, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը[17]:

Փաստագրության վերլուծություն

Գիտելիքներ հետազոտվող հարցի վերաբերյալ	Ո՞րն է խնդիրը	Ո՞ւմ հետ խորհրդակցել	Հնարավոր լուծումներ

Դեպքի ուսումնասիրությունը ուսուցման ժամանակակից մեթոդներից մեկն է, որը հաջողությամբ հանրաորություն է տալիս կիրառվել պատմություն ուսուցանման ընթացքում: Այս մեթոդի նպատակն է որոշակի դեպքի, իրադարձության, իրավիճակի բազմակողմանի ուսումնասիրությունն է, որի արդյունքում արժևորվում է դեպքը, կատարվում են եզրահանգումներ: Այս մեթոդի օգտագործման ժամանակ աշակերտները ստանում են երևակայական կամ իրական խնդրահարույց իրավիճակի (հանգամանքներ, պատահարներ, դիպվածներ) կամ դեպքի նկարագրությունը, որը

[16] Ավետիսյան Գայանե, Ուսուցման ժամանակակից մեթոդների արդյունավետությանը միտված հարցեր, Գիտամեթոդական հոդվածներ.2019, էջ 80 էջ

[17] https://lib.armedu.am/files/resource/files/2022-12-10/2ead4d7b90487cc72e4d17a5ec742e5.pdf

պարունակում է տվյալ դեպքին վերաբերող հեղինակի դիրքորոշումը, կողմնակի անձի տեսակետը, հիմնական, բացահայտված փաստեր, որտեղ առկա են որոշակի հակասություններ, կարծիքներ, տեսնել հակասությունները՝ լուծող իրավիճակներ: Այնուհետև նա քննարկում և վերլուծում է այդ փաստերը և տեղեկությունները, պարզում անցյալի ու ներկայի միջև հակասությունները, զուգորդում այն հայտնի նմանատիպ իրավիճակների կամ նախադեպերի հետ, գնահատում խնդիրը, ունենում որոշում և ներկայացնում իր լուծումը: Դեպքերը կարող են հորինել ինչպես ուսուցիչը, այնպես էլ աշակերտները նաև առանձին աշակերտը:

Շրջագայություն պատկերասրահում մեթոդը խճանկարի տարատեսակ է, որը նպատակ ունի փոխանակել տեղեկություններ, մշակելու գաղափարները, զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու և այլ կարողություններ: Դասարանը բաժանվում է 4 հոգանոց իրար հետ համագործակցող փոքր խմբերի: Ուսուցիչն առաջադրանքը բաժանում է 4-6 մասերի և յուրաքանչյուր խմբի տալիս դրանցից մեկը՝ ուսումնասիրելու: Խմբի թիվը կարող է մեծ լինել նյութի հատվածների թվից: Այդ դեպքում նյութի հատվածը կարող է տրվել 2 խմբի: Աշխատելով ուսումնական նյութից իրենց բաժին հասած հատվածի վրա (խորհուրդ է տրվում առաջադրանքի կիրառման տարբեր մոտեցումներ հանդես բերվեն)՝ խմբերն ստեղծում են նյութի բովանդակությունն արտացոլող նկար, աղյուսակ, դիագրամ և այլն: Պատրաստի աշխատանքները փակցվում են պատերին՝ ստեղծելով պատկերասրահ: Այնուհետև խմբերի ներսում աշակերտները հաշվում են մեկից մինչև չորսը և կազմում չորս նոր խումբ՝ ըստ իրենց համարների (բոլոր խմբերի առաջին համարները մի խումբ են, երկրորդները, երրորդները և չորրորդները՝ ուրիշ խմբեր): Այս նոր խմբերը շրջում են պատկերասրահում՝ կանգնելով բոլոր ցուցանմուշի մոտ, ու տվյալ խմբի այն աշակերտը, ով մասնակցել է այդ ցուցանմուշի ստեղծմանը, մանրամասն ցուցադրում է իրենց աշխատանքը, պատասխանելով հարցերին և կատարելով լրացումներ ու ուղղումներ: Շրջագայությունն ավարտվում է, երբ բոլորը ծանոթանում են աշխատանքներին: Շրջագայությունից հետո մասնակիցները վերադառնում են իրենց հիմնական խմբերը, վերանայում ու կրկին քննարկման հարց դարձնում իրենց աշխատանքները՝ այս անգամ արդեն համեմատելով մյուս աշխատանքների հետ, պարզաբանում նոր ծագած հարցերը: Գնահատումը կատարվում է ռուբրիկներով՝ ինչպես խճանկարի մեթոդի կիրառման ժամանակ:

Խմբային հետազոտությունը ևս համագործակցային ուսուցման մեթոդ է, որի կատարման ընթացքում աշակերտները խմբերով ուսումնասիրում են որոշակի խնդիր: Խմբային հետազոտության մեթոդով աշխատանքները ևս սկսվում են խմբերի ձևավորումից և թեմաների ընտրությունից: Խմբերի ձևավորումից և թեմայի (օրինակ՝ հայ-հռոմեական պատերազմ) ընտրությունից հետո անպայման անցկացվում է թիմ ձևավորող վարժություն: Այնուհետև սկսվում է խմբային աշխատանքի պլանավորման գործընթացը: Աշակերտները որոշում են իրենց աշխատանքի բովանդակությունը, նախանշում ռեսուրսները, սահմանում խմբի անդամների պարտականությունները: Եթե խմբի բոլոր անդամները ուսումնասիրում են ամբողջական թեման, ապա պարտականությունների բաժանումը հետո է կատարել: Ընդամենը պետք է որոշել, թե ով ինչ սկզբանաղբյուրներ ու գրականություն է ուսումնասիրելու: Իսկ երբ խումբը բաժանվում է մի քանի

մասի, և դրանցից յուրաքանչյուրը ուսումնասիրում է ինչ որ ենթահարց, ապա պետք է որոշել թե ով է համակարգելու ենթախմբերի աշխատանքը, և ով պետք է ներկայացնի թեման: Խմբային աշխատանքի պլանավորումանը հաջորդում է հետազոտության իրականացմանը, որն ամենաերկար փուլն է: Այս փուլում աշակերտները փնտրում են գրականություն, հավաքում տեղեկություններ: Այս ընթացքում ուսուցիչը մերթընդմերթ պարզում է, թե ինչով են զբաղված աշակերտները և ինչիերի կարիք ունեն: Տեղեկատվության հավաքումից հետո աշակերտները անցնում են մշակելու, վերլուծելու, համակարգելու այն «եզրահանգումներ անելու, ամփոփելու և ներկայացման պատրաստվելու»: Այս փուլում ուսուցիչը պետք է փորձի օգնության ձեռք մեկնել աշակերտներին, կանխել թեմայից շեղումները: Աշակերտներին կարելի է խորհուրդ տալ իրենց կատարած աշխատանքը մեկ մեկ ներկայացնել խմբի անդամներին, ընթացքում օգտագործել աղյուսակներ, գրաֆիկներ և այլն: Հետազոտական աշխատանքի արդյունքների ամփոփումից հետո խմբերը պետք է ներկայացնեն դրանք: Ներկայացումը հնարավոր է կատարել բանավոր, գրավոր և պատկերային ձևով, և շատ ցանկալի է, որ բոլոր միջոցներն էլ կատարվեն: Վերջում կատարվում է երեք նպատակի՝ խբային աշխատանքի, խմբային հետազոտական աշխատանքի և թեմայի բովանդակության յուրացման գնահատում, որոնց համար օգտագործվում են համապատասխան ռուբրիկներ:

Նախագծային մեթոդը ծագել է անցած հարյուրամյակի սկզբում ԱՄՆ-ում ու անվանվել նաև հիմնախնդիրների մեթոդ և կապված է փիլիսոփայության և կրթության մեջ ամերիկացի փիլիսոփա ու մանկավարժ Ջ. Դյուիի և նրա աշակերտ Ու. Քիլպատրիկի անվան հետ:

Կարելի է, իհարկե դրանք զարգացնել նկատի ունենալով ընկալման և մտածողության մակարդակները /օրինակ՝ ըստ Բլյումի դասակարգման :

Ի՞նչ գիտեի:	Ի՞նչ իմացա:
Ի՞նչ եզրակացություն արեցի:	Ինչպե՞ս կարող եմ օգտագործել:

Քառաբաժան աղյուսակի վերը նշված երկու ձևերը նպատակահարմար է լրացնել ըստ համարակալման: Անհատական աշխատանքի դեպքում զույգերն իրենց գրառումները ներկայացնում են միմյանց, ապա ամբողջ թիմին: Զույգի կամ թիմի ընտրությամբ աշխատանքը ներկայացվում է ամբողջ դասարանին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, կրթական բարեփոխումներն անխուսափելիորեն առաջ են բերում ուսուցչի դերի փոփոխություն: Այդ փոփոխության գործոնները բազմաթիվ են և, ի վերջո, պայմանավորված են նրանով, որ հասարակական արմատական վերափոխումների հետևանքով որակապես փոխվել է սերունդը՝ նրա մտածողությունը, ձգտումներն ու սպասելիքները, և, ուրեմն, փոխվել են նաև կրթական խնդիրները, դրանց իրականացման պայմանները: Աշակերտը սովորում է ապրելով ու վերապրելով դասի ամբողջ ընթացքը, նրա համար հաճախ ավելի մեծ կարևորություն ունի ուսուցչի կողմից իրեն գիտելիք մատուցելու ձևը, ուսուցման գործընթացում իր ընդգրկվածության եղանակը, քան բուն գիտելիքն ինքնին: Ի՞նչ: Ինչո՞ւ: Ինչպե՞ս: Ցուրաքանչյուր ուսուցիչ միևնույն դասարան մտնելն ինքն իրեն հարց է տալիս, թե ո՞րն է այդ դասի նպատակը և ի՞նչ պետք է սովորեցնի նա աշակերտին, Ինչո՞ւ և Ինչպե՞ս: Ուսուցչի կողմից ակտիվ մեթոդների յուրացումն առանց աշակերտի անմիջական մասնակցության անհնար է: Մեթոդների արդյունավետ կիրառման հստակ

բանաձևեր չկան: Ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի: Ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել այդ եզակի իրավիճակին: Ուսուցչի խնդիրը շարունակում է մնալ աշակերտներին ինքնուրույնաբար կարդացածը հասկանալ սովորեցնելը, գլխավորը երկրորդականից տարբերելը, ինքնուրույն եզրահանգումներ կատարելը: Այսպիսով, պատմաբան-մանկավարժի խնդիրն է յուրաքանչյուր սովորողի համար ստեղծել այնպիսի նպաստավոր միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որոնց շնորհիվ հնարավոր կլինի դրսևորել նախաձեռնողականություն և ստեղծագործական միտք:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցների տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Բոլոր մեթոդների խնդիրն է միասնաբար լուծել սովորողների կրթության, դաստիարակության և զարգացման խնդիրները:

Պատմական երևույթների մեծ մասը, եթե ոչ բոլորը, կարող են մեկնաբանվել և վերակառուցվել տարբեր տեսանկյուններից, ինչը պայմանավորված է տեղեկատվության սահմանափակ լինելով, պատմությունը մեկնաբանողների և վերականգնողների սուբյեկտիվ շահերով և մշակութային փոփոխություններով, որոնք զգալի չափով որոշում են, թե յուրաքանչյուր նոր սերունդ անցյալի որ պահերն է կարևորում: Այս առումով կրկին կարևոր նշանակություն է ձեռք բերում հայոց պատմության դասավանդումը: Ոչ պակաս կարևոր է, երբ դասագրքերի հեղինակները, ինչպես նաև այն պատմաբանները, ովքեր սկզբնաղբյուրների ուսումնասիրության վրա հիմնված դասավանդման կողմնակիցներ են, լրջորեն վերաիմաստավորեն իրենց մոտեցումները, պաբերաբար աշակերտներին ներկայացնեն տարբեր աղբյուրներից սեղմ հատվածներ, իսկ հետո պահանջեն հիմնավորել այն եզրակացությունները, որն աշակերտների փոխարեն կատարել է հեղինակը: Պատմաբան մանկավարժը պետք է գիտակցի, որ տեսակետների բազմազանությունը անհրաժեշտ է օգտագործել, անկախ վերջնական եզրահանգումից, լրացուցիչ հարցեր և վարժություններ մշակելու ճանապարհով: Միմիայն այդ եղանակով է հնարավոր բացահայտել և արժևորել պատմական վիճահարույց խնդրի առավել հավաստի պատկերը: Աշակերտի ցանկալի գործողություններում ընդգրկվելը, ճիշտ ընտրված և անհրաժեշտ աջակցություն ունենալը նպաստում է ոչ միայն սոցիալական միջավայրում ներառմանը, այլև՝ ուսման առաջընթացին[18]:

Սովորողներին հաճելի է աշխատել խմբում, բայց հիարկե ունենալ իրենց առանձին աշխատանքները: Վերջում որպես մոտիվացիա ասվում է գովեստի խոսք, որը սովորողի մոտ առաջացնում է էլ ավելի շատ սովորելու ցանկություն: Ամենակարևորը սրա միջոցով բարելավվում են նրա հաղորդակցական, ինքնուրույն, վերլուծողական և փնտրողական հմտությունները: Այսպիսով դասերը հաջողված ու ավելի արդյունավետ են լինում, երբ «Հայոց պատություն» առարկայի յուրաքանչյուր թեմա ներկայացվում է համապատասխան նյութով ու տրամադրությամբ:

[18] https://hmk.am/wp-content/uploads/2022/02/ardyunavet-harmarecumner_vorakyal-krtutyun.pdf

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ս. Խաչատրյան. Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, համահեղինակներ՝ Տ. Սարդարյան, Ա. Սարգսյան, Ա. Հայդարցյան, Ա. Մամյան, Լ. Միրզոյան, Ա. Սարգսյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Մարտիրոսյան, Ս. Հովսեփյան, Գ. Ղարագյոզյան, «Ուսուցման արդյունավետ հնարներ», Եր. 2020
2. Ց.Ա. Ամիրջանյան, Ա.Ս. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան 2005
3. Ի. Ֆ. Խառլամով, «Մանկավարժություն». – Մ. Գարդարիկի, Մինսկ 1999
4. Լ. Գ. Լապտևա, Վ. Ա. Սլաստենին, Ա.Ի. Պոդոլսկայա, «Հոգեբանություն և մանկավարժություն», Հոգեբերապիայի ինստիտուտի հրատարակչություն, 2004
5. Ջ.Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան 2015, էջ 271:
6. Ա. Արնաուդյան, Ա. Գուլբուդաղյան, Ս. Խաչատրյան, Ս.Խրիմյան, Մ. Պետրոսյան, «Մասնագիտական զարգացման ձեռնարկ»,Կրթության ինստ. հրատ. 2004 թ.
7. Գ. Ավետիսյան, «Մայրենիի ուսուցման ժամանակակից մեթոդների արդյունավետությանը միտված հարցեր», «Մխիթար Գոշ». Գիտամեթոդական հոդվածներ, Եր. 2019
8. Ս.Սարուխանյան, Ա. Դալլաբյան, Ն. Դիշաղաջյան, «Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ», Վանաձոր 2008
9. Ս.Վ. Սարգսյան, «Հայ ռազմարվեստի պատմությունից», Եր. 1969
10. Հ. Ղևոնդյան, «Պատմության ուսուցչի բանավոր խոսքը ուսուցման պրոցեսում», Եր. 1984
11. Ն. Մանուկյան, Ջ. Գևորգյան, «Ինչու՞, Ինչպե՞ս , Գիրք պատմության ուսուցման», Պարադիգմա, «Գալուստ Կյուլպենկյան», Եր. 2020
12. Taylor, K& Rohrer, D., “The Effects of Interleaved Practice”, Applied Cognitive Psychology, 2010
13. Robert Stradling , "The Secretary General’s New Initiative: The reform of history teaching and the preparation of new history textbooks", Strasbourg, Council of Europe publishing, 1999
14. Е.А. Разин, История военного искуства, Москва 1955

Համացանց

1. https://ahaslides.com/hy/blog/15-innovative-teaching-methods/
2. https://publishing.ysu.am/fils/10.pdf
3. https://lib.armedu.am/files/resource/files/2023-0413/a7fee4a3ddb57e1afe6a8f8453042993.pdf
4. https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/mxitargosh/2019(1).pdf
5. https://lib.armedu.am/files/resource/files/2022-12-10/2ead4d7b90487cc72e4d17a5ec742e5.pdf
6. https://hmk.am/wp-content/uploads/2022/02/ardyunavet-harmarecumner_vorakyal-krtutyun.pdf